

**«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի
Շահառուների խորհրդի 2007 թվականի մայիսի 16-ին ժամը 15:00-ին կայացած
նիստի**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նիստին մասնակցում էին.

Աբրահամյան Հակոբ	Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն
Բարսեղյան Լևոն	Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ ՀԿ
Գասպարյան Մամիկոն	«Զրվեժ-Չորաղբյուր» ՋՕԸ
Երիցյան Էմին	Հայաստանի համայքների հանրապետական ասոցիացիա
Հովհաննիսյան Արայիկ	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա»
Համբարձումյան Վարդան	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն
Հովհաննիսյան Էդուարդ,	«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ
Վեհանուշ Հովհաննիսյանի	
լիազոր ներկայացուցիչ	
Նազարյան Կարեն	Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ
Ներսիսյան Լևոն	«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
Ոսկանյան Աշոտ	«Ազրոզարգացում» ՀԿ
Ջավադյան Հրաչիկ	Կիրառական հետազոտությունների և ազրոբիզնեսի հիմնադրամ
Սողոմոնյան Վանիկ	Ֆերմերների ազգային միավորում
Վարդանյան Նազելի	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ
Ղազարյան Տոնական	«Շենիկ» ՋՕԸ

Նիստից բացակայում էին.

Հովհաննիսյան Լյուդմիլա	Վերամշակող, Կոտայքի մարզ
Հովհաննիսյան Վեհանուշ	«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև.

Հովսեփյան Արա	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
----------------------	---

Ռասիմ Ալեքս	Հայաստանի ծրագրի տնօրեն, ՀՄԿ
Ղազարյան Էլեն	Ամերիկայի առևտրի պալատ
Չեյզ Մարշալ	Ամերիկայի առևտրի պալատ
Սեդրակյան Սարգիս	“Ֆերմերային Շարժում” ՀԿ
Ասլանյան Հասմիկ	“Շողեր միություն” ՀԿ
Եղոյան Աբգար	«Սսպառողների իրավունքների պաշտպանություն», ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. ՀՀ խորհրդարանական ընտրությունների ընթացքի և արդյունքների քննարկում քաղաքացիական հասարակության ներգրավվածության տեսանկյունից.
2. Շահառուների խորհրդի անդամների ընտրական գործընթացի կազմակերպման ներկա ընթացքի ներկայացում և քննարկում.
3. Շահառուների խորհրդի մարզային կենտրոնների ստեղծման առաջարկության քննարկում (ներկայացված ՇԽ անդամ Լևոն Ներսիսյանի կողմից).
4. Ենթակառուցվածքներ բաղադրիչի շրջանակներում “Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում” խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար գնահատման հանձնաժողովի կազմում Շահառուների խորհրդի ներկայացուցչի ընտրություն և հաստատում.
5. Այլ հարցեր:

Շահառուների խորհրդի բոլոր անդամները միաձայն նիստի նախագահող ընտրեցին Շահառուների խորհրդի անդամ Մամիկոն Գասպարյանին: Նիստի նախագահողը բացեց նիստը և առաջարկեց հաստատել օրակարգը: ՇԽ անդամ Լ. Ներսիսյանը առաջարկեց չքննարկել օրակարգի առաջին հարցը, քանի որ խորհրդարանական ընտրությունների մասին արդեն շատ է խոսվել և քննարկվել: Եղավ նաև առաջարկություն լսել Ա. Ռասիմին ՀՄՀ ծրագրի շարունակելիության առումով, ինչպես նաև ներկաների կարծիքը բարձրացրած հարցադրման կապակցությամբ: Որոշվեց հաստատել օրակարգի նախագիծը (միաձայն):

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ.

Նախագահողը ձայնը տվեց Ա. Ռասիմին ներկայացնելու ՀՄԿ դիրքորոշումը ծրագրի

շարունակելիության առումով՝ հաշվի առնելով ՀՀ խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Ա. Ռասինը նշեց, որ այս կամ այն երկրի ծրագրի շարունակելիության հարցը որոշվում է ՀՄԿ Տնօրենների Գործադիր Խորհրդի կողմից, որը Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների առումով որևէ դիրքորոշում դեռ չի ներկայացրել:

Քանի որ ուրիշ ելույթներ չհնչեցին, առաջարկվեց ի գիտություն ընդունել Ա. Ռասինի հայտարարությունը և հետագայում առաջնորդվել ծրագրի վերաբերյալ ներկայացվելիք գնահատականներով: Առաջարկությունը ընդունվեց միաձայն:

Որոշում. Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ որոշվեց՝ ի գիտություն ընդունել Ա. Ռասինի կողմից ներկայացված հայտարարությունը առ այն, որ ՀՄԿ Տնօրենների Գործադիր Խորհուրդը որևէ պաշտոնական հայտարարություն չի ներկայացրել ՀՀ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ և առաջնորդվել Գործադիր Խորհրդի կողմից ներկայացվելիք հետագա գնահատականներով:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ.

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացնելու համար խոսքը տրվեց ՇԽ ընտրական կարգը մշակող աշխատանքային խմբի անդամ Հ. Ջավադյանին: Նա նշեց, որ աշխատանքային խումբը ներկայումս մշակում է ՇԽ ընտրությունների կարգը, որը շուտով կներկայացվի լայն քաղաքացիական հասարակության քննարկմանը:

Քննարկում.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ՇԽ անդամները առաջադրեցին մի շարք հարցադրումներ, այդ թվում

- Ո՞վ է լիազորված հաստատելու ՇԽ ընտրությունների կարգը:

Այս հարցի կապակցությամբ կարծիքները բաժանվեցին երեք հիմնական մասի՝

1. Կառավարման խորհուրդը՝ որպես Համաձայնագրի գերագույն մարմին (Ա. Հովսեփյան)
2. Շահառուների խորհուրդը՝ որպես քաղաքացիական հասարակության կողմից լիազորված մարմին, որը իրավասու է հաստատելու իր իսկ ընտրության կարգը (Ն. Վարդանյան, Վ. Համբարձումյան)
3. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից բաղկացած ժողովը (Ս. Սեդրակյան, Հ. Ջավադյան, Է. Երիցյան, Հ. Ասլանյան):

եղավ առաջարկություն նախանշել ՇԽ ընտրական գործընթացի կազմակերպման առաջիկա քայլերը և ըստ այդմ կազմակերպել ՇԽ ընտրական կարգի մշակումը և հասատումը.

ա) ՇԽ անդամներից (Յ. Ջավադյան, Ն. Վարդանյան, Ա. Ոսկանյան) բաղկացած խումբը մեկ շաբաթվա ընթացքում կմշակի ՇԽ ընտրական կարգի նախագիծը, որը կներկայացվի լայն քաղաքացիական հասարակության քննարկմանը և բաց կլինի դիտողությունների և առաջարկությունների համար (նախատեսվում է կիրառել բոլոր ընդունելի մեթոդները կարգի նախագծի լայն քննարկում անցկացնելու համար՝ ՀԱՀ-Ջայաստան վեբ կայքի, էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև թերթերում հայտարարություններ տեղադրելով և այլն);

բ) քաղաքացիական հասարակությանը կտրամադրվի 10 աշխատանքային օր կարգի վերաբերյալ իրենց դիտողությունները և առաջարկությունները ներկայացնելու համար;

գ) լրամշակված տարբերակը կներկայացվի ՇԽ և լայն քաղաքացիական հասարակության քննարկմանը;

ե) առաջարկել Ա. Հովսեփյանին ուսումնասիրելու ՇԽ ընտրական կարգի հաստատման վերաբերյալ Համաձայնագրի և Համաձայնագրից բխող այլ պայմանագային կետեր և քննարկել դրանք ՇԽ անդամների հետ:

Որոշում. Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել ՇԽ ընտրական կարգի մշակման առաջարկվող վերոնշյալ գործողությունները և առաջնորդվել դրանցով:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ.

Օրակարգի երրորդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց ՇԽ անդամ Լ. Ներսիսյանին: Նա նշեց, որ իր կողմից ներկայացված առաջարկությունը բխում է ՀՀ մշակույթի և երիտասարդության հետ կապերի փոխնախարար Ա. Պողոսյանի հետ քննարկումից, որի ընթացքում Ա. Պողոսյանն արտահայտել է պատրաստակամություն և բարի կամք տրամադրելու մարզերում գործող երիտասարդական կենտրոնների տեխնիկական հնարավորությունները ՀԱՀ ծրագրի ռեսուրս կենտրոններ ստեղծելու համար: Այս կենտրոնների հիմնական նպատակն է մարզերում բնակվող ծրագրի շահառուներին, հետաքրքրված ՀԿ ներկայացուցիչներին ցուցաբերել աջակցություն ծրագրի վերաբերյալ հնարավորինս շատ և հավաստի տեղեկատվություն ստանալու

նպատակով, հնարավոր է նաև կենտրոններում հիմնել “Ջրից դեպի շուկա” բաղադրիչի ֆերմերների ուսուցման նյութերի և ինֆորմացիայի բազա: Լ. Ներսիսյանը հավաստիացրեց նաև, որ այս գաղափարն իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի երիտասարդական կենտրոնների աշխատակիցները և անդամներն անցնեն համապատասխան վերապատրաստում ՋՄՅ ծրագրին և իրենց աշխատանքի ելայանը ծանոթանալու նպատակով:

Քննարկում

Բոլոր մասնակիցները համաձայնեցին ծրագրի մարզային շահառուներին տեղեկատվություն և ինֆորմացիա տրամադրելու անհրաժեշտության հետ և ողջունեցին մարզերում աջակցության կենտրոնների հիմնման գաղափարը: Սակայն հանդիպման մի շարք մասնակիցներ մտահոգություն հայտնեցին որևէ կազմակերպություն ընտրելու գաղափարի շուրջ: Այս առումով Ա. Յովսեփյանը առաջարկեց նախ շնորհակալություն հայտնել մշակույթի և երիտասարդության հետ կապերի նախարարությանը առաջարկվող աջակցության համար և փորձել հնարավորիս համագործակցել և աջակցել երիտասարդական կենտրոններին ՋՄՅ ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցում: Նա նաև առաջարկեց չսահմանափակվել այս կամ այն կազմակերպությանը տեղեկատվական աջակցություն տրամադրելով և առաջիկա արտագնա հանդիպումների ընթացքում հանդիպումներ կազմակերպել մարզային քաղաքացիական հասարակության հետ և ներկայացնել որպես ծրագրի ռեսուրս կենտրոն ծառայելու հնարավորությունը: Հանդիպման մասնակիցները կողմ արտահայտվեցին հարցի կապակցությամբ Ա. Յովսեփյանի կողմից առաջարկվող մոտեցումներին:

Որոշում. Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ որոշվեց չմերժել մարզային երիտասարդական կենտրոններում ՋՄՅ-Հայաստան ծրագրի տեղեկատվական աջակցության կենտրոններ ստեղծելու Լ. Ներսիսյանի կողմից ներկայացված առաջարկությունը և հետագայում այս հնարավորությունը ներկայացնել նաև մարզային քաղաքացիական հասարակությանը և աջակցություն ցուցաբերել բոլոր հետաքրքրված կազմակերպություններին:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ.

Օրակարգի չորրորդ հարցը ներկայացնելու համար խոսքը տրվեց Ա. Յովսեփյանին: Ա. Յովսեփյանը նախ նշեց, որ ՋՄՅ-Հայաստանը դիմել է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիա մրցութային փաստաթղթերում անգլերեն լեզվից բացի

ռուսերեն լեզվի պահանջը ամրագրելու առաջարկությամբ, որի ընդունումը կապահովի քաղաքացիական հասարակության ավելի լայն մասնակցության հնարավորություն գնահատման գործընթացում: Այնուհետև Ա. Յոսեֆյանը համառոտ տեղեկատվություն ներկայացրեց Ենթակառուցվածքներ բաղադրիչի շրջանակներում “Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում” խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մասին և նշեց հանձնաժողովում քաղաքացիական հասարակություն ներկայացուցիչ պատվիրակելու առաջարկի մասին (մեկ անդամ): Չորրորդ հարցի շրջանակներում Ա. Յոսեֆյանը ներկայացրեց նաև ՀՄՀ ՊՈԱԿ-ի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման մասնագետի թափուր պաշտոնի հայտարարությունը (հաշվի առնելով, որ համապատասխան մասնագետը ազատվել է աշխատանքից իր դիմումի համաձայն) և մասնագետի ընտրության գնահատող հանձնաժողովում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի հաստատման հարցը: Շեհանդամները միաձայն ընտրեցին և հաստատեցին համապատասխան Շեհանդամների թեկնածությունը վերոհիշյալ գնահատող հանձնաժողովի կազմում:

Որոշում. Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ որոշվեց հաստատել համապատասխան Շեհանդամների թեկնածությունը որպես “Երրորդ կարգի ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում” խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար գնահատման հանձնաժողովի և բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման մասնագետի ընտրության հանձնաժողովի անդամ:

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ.

Այլ հարցերի շրջանակում հանդես եկավ Լ. Բարսեղյանը և հայտարարեց, որ ժուռնալիստների “Ասպարեզ” ՀԿ-ն հանդիսացել է խորհրդարանական ընտրությունների անկախ դիտորդ և շուտով կներկայացնի իր զեկույցը ընտրական գործընթացների վերաբերյալ:

Նախագահողը հայտարարեց նիստի ավարտը ժամը 17:00:

Նիստն արձանագրեց՝ Վիկտորյա Գրիգորյան, Շեհ օգնական